

Հաշվետվություն

ՀՀ Սյունիքի մարզի «Լեվազի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ-ում 01.01.2011թ. առ 01.01.2014թ. ժամանակաշրջանի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտորական ուսումնասիրությունների վերաբերյալ

Տնօրեն	Վ. Վարդանյան
Հաշվապահ	Լ.Պետրոսյան
Հասցեն	Մեղրի գ. Լեվազ
Հեռախոս	4-47

Համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի 2014թ. «Ներքին աուդիտի բաժնի» տարեկան ծրագրի, մեր կողմից իրականացվեց Սյունիքի մարզի «Լեվազի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 01.01.2011թ. առ 01.01.2014թ. ժամանակաշրջանի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ:

Մենք աուդիտի ենք ենթարկել կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը 01.01.2011թ. առ 01.01.2014թ. ժամանակաշրջանը, հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները: Այս ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է կազմակերպության ղեկավարությունը: Աուդիտն ընդգրկում է նաև ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալների և համապատասխան ծանոթագրությունները հիմնավորող փաստերի ընտրանքային կարգով ստուգումը, գնման գործընթացի իրականացումը, կիրառվող հաշվապահական հաշվառման սկզբունքները, ֆինանսական փաստաթղթերի կազմման գնահատումը, ղեկավարության կողմից իրականացվող կառավարումը, խիստ հաշվառման փաստաթղթերի հաշվառման և պահպանման ընթացքը, դասագրքերի վարձակալությունը:

Աուդիտն անցկացրինք աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Մեր պարտականությունն է իրականացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ:

Կազմակերպությունը ունի կանոնադրություն, որը գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տարածքային բաժնում՝ առակ է վկայականը:

Կազմակերպությունում գործում է վարձու աշխատողների աշխատանքի ընդունման, նույն գործատուի մոտ այլ աշխատանքի փոխադրման ու աշխատանքից ազատման վերաբերյալ հրամանագիրք, դրանք սահմանված կարգով համարակալված, թելակարված եվ կնքված է կազմակերպության կնիքով:

Ուսումնասիրության պահին կազմակերպության դրամարկղում կանխիկ դրամի մնացորդ հաշվապահորեն և փաստացի չի եղել:

2011թ. հունվարից դպրոցում սովորում էր 98 աշակերտ և գործում էր 11 դասարան, աշխատողների թիվը կազմում էր 26 մարդ, այդ թվում 20 մանկավարժ, իսկ սեպտեմբերից սովորում էր 98 աշակերտ, գործում էր 12 դասարան, աշխատողների թիվը կազմում էր 26 մարդ, այդ թվում 20 մանկավարժ:

2011թ. տարեկան նախահաշվով դպրոցի պահպանման համար ծախս էր նախատեսվել 37511.9 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 37511.9 հազ. դրամ եվ հ/հ մնացորդը առ

01.01.2011թ.' 841.2 հազ. դրամ: Դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 37152.8 հազ. դրամ, հ/հ մնացորդը առ 01.01.2012թ. կազմել է 1200.3 հազ. դրամ, կամ նախահաշվով նախատեսված ծախսը կատարվել է 99.0 տոկասով:

Առ 01.01.2011թ. կազմակերպության դեբիտորական պարտքը կազմել է 456.1 հազ. դրամ, որը մնացել է անփոփոխ, իսկ կրեդիտորական պարտքեր չի ունեցել:

Բանկային և դրամարկղային գործառույթները կատարվել են գործող օրենքների և իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Աշխատավարձերի հաշվարկման և վճարման գործառույթների ընտրանքային ստուգման ընթացքում սխալներ և թերություններ չեն արձանագրվել:

Կազմակերպությունում առկա է գործառույթների իրականացման հետ կապված պայմանագրերը:

Դպրոցի ջեռուցումը կատարվում է էլ. մարտկոցներով:

2011թ. աշակերտների և մանկավարժների երթևեկության համար ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 141.9 հազ. դրամ:

2011թ. նախահաշվով նախատեսված և կատարված ծախսերը՝ ունեն փաստաթղթային հիմնավորումներ, որը համապատասխանում է ՀՀ կառավարության 1998թ օգոստոսի 25 թիվ 525 որոշման պահանջներին:

2011-2012 ուս. տարվա համար վարձակալությամբ տրվել է 874 դասագիրք, որի վճարման ենթակա գումարը կազմել է 318.2 հազ. դրամ, որն ամբողջությամբ գանձվել և մուծվել է:

2010-11 ուս. տարվա համար ստացվել և տրվել է 9 հատ իննամյա կրթության վկայական, որոնք հաշվառված են համապատասխան գրանցամատյանում:

2012թ. հունվարից դպրոցում սովորում էր 95 աշակերտ և գործում էր 11.5 դասարան, աշխատողների թիվը կազմում էր 26 մարդ, այդ թվում 20 մանկավարժ, իսկ սեպտեմբերից սովորում էր 87 աշակերտ, գործում էր 11.5 դասարան, աշխատողների թիվը կազմում էր 28 մարդ, այդ թվում 23 մանկավարժ:

2012թ. տարեկան նախահաշվով դպրոցի պահպանման համար ծախս էր նախատեսվել 38114.0 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 38114.0 հազ. դրամ եվ հ/հ մնացորդը առ 01.01.2012թ.' 1200.3 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 37548.6 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 38004.7 հազ. դրամ, հ/հ մնացորդը առ 01.01.2013թ. կազմել է 1765.7 հազ. դրամ, կամ նախահաշվով նախատեսված ծախսը կատարվել է 99.7 տոկասով:

Առ 01.01.2013թ. կազմակերպությունը դեբիտորական և կրեդիտորական պարտքեր չի ունեցել:

2012թ. աշակերտների և մանկավարժների երթևեկության համար ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 123.1 հազ. դրամ:

2012թ. նախահաշվով նախատեսված և կատարված ծախսերն ունեն փաստաթղթային հիմնավորումներ, որը համապատասխանում է ՀՀ կառավարության 1998թ օգոստոսի 25 թիվ 525 որոշման պահանջներին:

2012-2013 ուս. տարվա համար վարձակալությամբ տրվել է 732 դասագիրք, որի վճարման ենթակա գումարը կազմել է 242.4 հազ. դրամ, որն ամբողջությամբ գանձվել և մուծվել է:

2011-12 ուս. տարվա համար ստացվել և տրվել է 5 հատ իննամյա կրթության վկայական և 13 հատ միջնակարգ կրթության ատեստատ, որոնք հաշվառված են համապատասխան գրանցամատյաններում:

2013թ. հունվարից դպրոցում սովորում էր 89 աշակերտ և գործում էր 11.5 դասարան, աշխատողների թիվը կազմում էր 28 մարդ, այդ թվում 23 մանկավարժ, իսկ սեպտեմբերից

սովորում էր 97 աշակերտ, գործում էր 11.5 դասարան, աշխատողների թիվը կազմում էր 28 մարդ, այդ թվում 23 մանկավարժ:

2013թ. տարեկան նախահաշվով դպրոցի պահպանման համար ծախս էր նախատեսվել 41701.9 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 41701.9 հազ. դրամ եվ հ/հ մնացորդը առ 01.01.2013թ.՝ 1765.7 հազ. դրամ: Դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 41842.8 հազ. դրամ, հ/հ մնացորդը առ 01.01.2014թ. կազմել է 1624.8 հազ. դրամ, կամ նախահաշվով նախատեսված ծախսը կատարվել է 100.0 տոկոսով:

Առ 01.01.2014թ. կազմակերպությունը դեբիտորական և կրեդիտորական պարտքեր չի ունեցել:

2013թ. նախահաշվով նախատեսված և կատարված ծախսերն ունեն փաստաթղթային հիմնավորումներ, որը համապատասխանում է ՀՀ կառավարության 1998թ օգոստոսի 25 թիվ 525 որոշման պահանջներին:

2013-2014 ուս. տարվա համար վարձակալությամբ տրվել է 725 դասագիրք, որի վճարման ենթակա գումարը կազմել է 298.4 հազ. դրամ, որն ամբողջությամբ գանձվել և մուծվել է:

2012-13 ուս. տարվա համար ստացվել և տրվել է 7 հատ իննամյա կրթության վկայական և 6 հատ միջնակարգ կրթության ատեստատ, որոնք հաշվառված են համապատասխան գրանցամատյաններում:

Արտաբյուջե.

Կազմակերպությունը ունի արտաբյուջետային հաշիվ, որի հիմնական մուտքը ստացվում է տարածքի վարձակալումից: Ստացված գումարները հիմնականում ծախսվում են դպրոցի կարիքների համար /թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն, գույքի ձեռքբերում, ոռոգման ջրի վարձ և այլն/:

Առ 01.01.2011թ. արտաբյուջետային հաշվի մնացորդը կազմել է 395.5 հազ. դրամ, մուտքը 2011թ. կազմել է 28.9 հազ. դրամ, ծախսը կազմել է 221.2 հազ. դրամ, մնացորդը առ 01.01.2012թ. կազմել է 203.2 հազ. դրամ:

2012թ. մուտքը կազմել է 40.1 հազ. դրամ, ծախսը կազմել է 170.8 հազ. դրամ, մնացորդը առ 01.01.2013թ. կազմել է 72.5 հազ. դրամ:

2013թ. մուտքը կազմել է 38.4 հազ. դրամ, ծախսը կազմել է 18.7 հազ. դրամ, մնացորդը առ 01.01.2014թ. կազմել է 92.2 հազ. դրամ:

Կատարված ծախսերն ունեն փաստաթղթային հիմնավորումներ, որը համապատասխանում է ՀՀ կառավարության 1998թ օգոստոսի 25 թիվ 525 որոշման պահանջներին:

Եզրակացություն.

Ուսումնասիրության ընթացքում արձանագրվեց, որ 2011թ. նախահաշվով նախատեսված ծախսը կատարվել է 99.0 տոկոսով, 2012թ. կատարվել է 99.7 տոկոսով, 2013թ. կատարվել է 100.0 տոկոսով:

Կազմակերպության դեբիտորական պարտքը առ 01.01.2011թ. կազմել է 456.1 հազ. դրամ, որը մարվել է 2012թ. ընթացքում, իսկ կրեդիտորական պարտքեր չի ունեցել:

Հաշվետու ժամանակաշրջանում նախահաշիվներով նախատեսված և կատարված ծախսերն ունեն փաստաթղթային հիմնավորումներ, որոնք համապատասխանում են ՀՀ կառավարության 1998թ. օգոստոսի 25 թիվ 525 որոշման պահանջներին:

Բանկային և դրամարկղային գործառույթները կատարվել են գործող օրենքների և իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Աշխատավարձերի հաշվարկման և վճարման գործառույթների ընտրանքային ստուգման ընթացքում սխալներ և թերություններ չեն արձանագրվել:

Կազմակերպությունում առկա է գործառույթների իրականացման հետ կապված պայմանագրերը:

Ապրանքանյութական արժեքների ստացումը և ծախսերը կատարվել են գործող օրենքների և իրավական ակտերի պահանջներին համապատասխան

Մենք կարծում ենք, որ աուդիտի ընթացքում հավաքագրվել է բավարար և հիմնավոր տեղեկություններ մեր կարծիքը հայտնելու համար:

Մեր կարծիքով կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական հաշվետվությունները, տնտեսական և կազմակերպչական գործառույթները կազմակերպության ֆինանսական վիճակի, դրամական հոսքերի, տնտեսական և կազմակերպչական գործունեության մասին տալիս են հիմնականում ճշմարիտ և իրական պատկեր ՀՀՀՍ-ի, ՀՀ «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի
<<Ներքին աուդիտի բաժնի>> պետ՝

Է. Միրզոյան

Գլխավոր մասնագետ՝
29 մարտ 2014թ.

Ս. Վեզիրյան